

2399

84  
12-32

532

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺԱՎՈՐԾ

84

Դ-327

№ 2

43400

537

796

89

Դ-35

ՁՈՐՁ ԱԵՑՈՒՄ

# ՓԱՑԼԱԿ

4003.

Առաջական համար. 1890 թ. № 1.

Центральная библиотека им. Ленина

гор. Баку

ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.

№ \_\_\_\_\_

Թ. Ի. Փ. Լ. Ի. Ս.

Ճաշարակ Մ. Շարադի. || Тип. М. Шарадзе.

1893

653

ՀՅԱՅՈՒ

## ՓԱՅԼԱԿ

(ՔՕՐՔ ՐԵՑՆԻԱԼ)



պանիացւոց նէապօլում տիրա-  
պետելու ժամանակ, ֆէ դա-  
րու սկզբին, ճնշուած ժողո-  
վուրդն անդադար ապստամ-  
բութեան ցոլցեր էր անում.  
Հայրենասիրութեան և ազա-  
տութեան մեծ և ազնիւ խօս-  
քերը որքան էլ մեզմ հնչէին,  
դարձեալ արձագանք էին գտնում ամենքի  
սրտում: Դաւադրութիւններն ու գաղտնի ըն-  
կերութիւններն արդէն գուշակել էին տալիս  
մի մեծ ապստամբութիւն, որ ընդհուալ բըր-  
գելու էր Մազանիէլլօի քարոզով:

Дозволено цензурою, Тифлисъ, 15-го Июля 1893 г.

3335  
40

9

Բոնակալութեան դէմ զալրացած Նէաւպօլցիք փախչում էին անմատչելի լեռները, որպէս զի ազատ մնան այն կեղեքումներից և անարդանքից, որ կրել էին տալիս մալրենի երկրին եկաւոր օտարները:

Եւ ալսպէս, շատ չանցած ալլ և ալլ խմբեր կազմուեցան Արքուցցների կիրճերում:

Սկզբում, ամենավեմ զգացմունքներով ոգեորուած ալդ քաջ մարդիկը, միայն մի նըպատակ ունէին, այն է՝ ծածուկ պատրաստութիւն տեսնել իրանց երկրի ազատութեան համար: Դժբաղդաբար, ալդ նպատակն ունեցող սակաւաթիւ կտրիճներին հետզհետէ միացան աւելի ստոր ձգտումների տէր անձինք: Ալդ քաջարի քաղաքացւոց շրջանում սկսեցին հալրենասիրութեան պատրուակով օրէնքի դէմ ապաստան որոնել պարտքերից փախած սնանկներ, անշնազանդ որդիք, շրջալիկներ և ուրիշ անարդ էակներ, և նուաստացրին նրանց սուրբ նպատակն աւազակութեան ստոր գործերով:

Մի ամառային գիշեր Միւժէլա սարին, մօտակալ բլրի վրայ, մի թաւ անտառի ստուերի մէջ, փոթորիկներից խոնարհուած հին ծառերի խորհրդական կամարի տակ զէն-

քերի շաշիւն ու մարդկանց ձայներ լսելի եղան: Ոչ մի բան չէր երևում, բայց կարելի էր գուշակել, որ հսկայական սոճիների տակ մի բազմաթիւ և գրգռուած խումբ էր գըտանըում:

Անլուսին ու մռայլ երկինքը, մրրկալից մթնոլորտի կապարալին ծանրութիւնը, կիրճում թաւալուսդ հեղեղատի մռնչիւնը հերեք էին սարսափ ազդելու ամեն մի էակի, որ մոլորուած կը լինէր այն խորտաքրորդ ու վարենի մենութեան մէջ: Մի աւազակ և լեռներում բռնուած մի անյալու ուղեոր միմեանց տալիս էին հետևեալ հարցն ու պատասխանը, որ կրկնապատիկ ահեղ էր թըւում այնպիսի մի շրջանակում:

— Քեզ բռնել են մի քարայրի մուտքի մօտ, ուր մենք գիզել ենք ոսկերեր ժայռերից հանուած թանկագին կոպիճները: Ալդ գանձերը սահմանուած են մեր գատը պաշտպանելու համար. . . Պու մեզ լըտեսում էիր, դու մահուան արժանի ես:

— Եթէ ես յանցաւոր եմ, ակտամալ եմ գործել յանցանքու: Ես չեմ խառնուում քաղաքական գործերի մէջ, և միայն պատահմամբ եմ այստեղ ընկել:

Պատասխանողի ձալնի թարմութիւնը,  
Նրա համարձակ ու երիտասարդական հնչււ-  
նը ցոյց էին տալիս, որ նա քսան տարեկանի  
մօտ մի աներկիւղ կտրիճ էր:

Հարցուփորձը շարունակուեցաւ.

—Ո՞վ ես դու, վերջապէս:

—Պարզ ասեմ — մի նկարիչ . . . բնու-  
թեան գեղարուեստի մի սիրահար: Ծնըն-  
դավալը է Արանէլլան: Գնում էի Հռովմ-  
բալոց հրապուրուելով ոտքով կտրած ճանա-  
պարհիս գեղեցիկութեամբ, ես փոքր ինչ շե-  
ղուեցալ ուղիղ շաւղից և մատիտը ձեռիս  
բռնած սկսայ ընդօրինակել սքանչելի շրջա-  
վալի տեսարանը: Այս զբաղմունքիս միջոցին  
էր, որ դուք բռնեցիք ինձ: Քըքրեցէք պա-  
յուսակս. . . Դուք ոչ մի բան չէք գտնիլ  
այստեղ, բացի իմ նախագծերից ու վրձին-  
ներից:

Կալանաւորի շուրջը երկբայութեան ու  
կասկածի շունչը բալձրացաւ:

—Ո՛քան էլ անմեղ լինի արած սխալդ,  
շարունակեց աւազակապետը, այնու ամենալ-  
նիւ դա վտանգ է սպառնում մեր շահերին:  
Ալժմ դու գիտես մեր հարստութեան պա-  
հուած տեղը, դու կարող ես մի բառով փոխ-

արքալի ձեռքը մատնել ամենքիս: Ուրեմն  
մեզ գրաւական է հարկաւոր — թող ալդ գրա-  
ւականդ կեանքդ լինի, և կամ թէ մի ուրիշ  
փրկանք, որի գինը հաւասար գար մեր պա-  
հած ոսկու արժեքին:

— Իմ ունեցած չունեցածս միայն մի  
քանի ֆրանկ է. . . Որտեղից վճարեմ ձեր  
պահանջած փրկանքը:

—Զէ որ ազգականներ կունենաս, հա-  
րուստ հարուստ բարեկամներ . . .

— Ես որբ եմ: Ընկերներս բոլորն էլ ինձ  
նման երիտասարդներ են, հարուստ՝ միայն  
լոկ յուսերով ու ցնորքներով:

—Լաւ մտածիր, լիշիր, գուցէ մտաբե-  
րես որ և է ծածուկ հնար, որ և է կարող  
օգնական: Տալիս եմ քեզ հինգ ըովէ: Եթէ  
ալդ միջոցին ոչ մի հնար չը գտնես . . .  
մենք քեզ այն տեղ կը գլորենք:

Եւ նա ամենաբար մատնացոյց արաւ-  
հազար հինգ հարիւր ոտնաշափ խորութիւն  
ունեցող անգունդը, որ վար էր իջնում այն  
եղերական գեպքի տեղից:

Երիտասարդը լուռ ու մունջ ընդունեց  
իրան շնորհուած լետաձգութիւնը: Նա նըս-

տես մի քարի վրայ, թփերի ու մացառի միջև։  
Հետզհետէ նրա մթութեան սովորած  
աչքերն աւելի ալարդ նշարեցին տեղի դիբ-  
քը։ Նա ըմբռնեց մտքով իւր սարսափելի  
վիճակը։ Փախչելու հնար չկար. . . Մի կող-  
մից անտառի չարագուշակ հովանին, սովոր-  
լուկ գալլերի նման հրոսակը, միւս կողմից  
բերանաբաց անդունդը, որի խորութիւնն աչ-  
քով անդամ կարող չէր չափել այն վշտագին  
գիշերուաւ մէջ։

Գերին մեքենաբար մի քար հրեց դէպի  
վայր. . . Քարը, չնայելով իւր ծանրութեան,  
միայն մի քանի վալրկենից լետոյ դիպաւ վհի  
յատակին, ուր և փշրուեցաւ, կտիծերի փոշի  
թօթափելով։

Թշուառ ուղեսորը, հակառակ իւր քա-  
ջութեան, սարսուռ զգաց, և նրա հայեացքը,  
խոյս տալով սոսկալի վհից, դէպի երկինք  
համբարձաւ, ասես թէ այն տեղ պաշտպա-  
նութիւն գտնելու համար։ Ոչ մի աստղիկ  
չէր փալլում։ Ծանր ծանր ամպերը սգոյ շը-  
դորչ էին տարածում մտհուան մտքով տագ-  
նապած թշուառի վրայ։

Մի զօրեղ ձեռք ուժգին ընկաւ նրա  
ուսի վրայ։

Արդէն անցել էր հինգ րոպէն։  
— Դէ, ուրեմն. . . Ի՞նչ կ'ասես մեզ. . .  
գոչեց ծաղրելով գաղանամիտ գահիճը։  
— Ի՞նչ էք ուզում, որ ասեմ ձեզ, ապ-  
տասիանեց նրա զոհը տիրութեամբ։  
— Եատ լաւ։ Եթէ ալդպէս է, վերջ տանք  
գործին։

Ոլդ խօսքի վրայ աւագակներից երկուսը  
բռնեցին գատապարտուածին և հրեցին դէպի  
անդունդը։

Ոյն ժամանակ մի քստմնելի կոիւ ծա-  
գեցաւ վհի եղերքին։ Կալանաւորը անձնա-  
պահանութեան բնազդով վառուած և այդ-  
պիսի մտհուան արհաւիրքից խուճապած պաշտ-  
պանուում էր, դիմադրում էր։ Քարերը գլոր-  
ւում էին նրա ներքանների տակ. . . Նա  
յուսահատ ձեռքերով բռնում էր լարձակուող-  
ների ուսուերից, որոնք վախենում էին, չլինի  
թէ նա ընկնելիս իրանց էլ քաշէ ձգէ խոր-  
խորատը։ Ամեհի, զարհութելի կոիւ էր այն. . .

Յանկարծ մի շլացուցիչ փայլակն ամպե-  
րը պատուեց. . . Յետոյ անընդհատ զողմամբ  
ցոլաց երկրորդը. . . երրորդը, և բոլոր եր-  
կինքը վառուեցաւ։

— Թողէք ինձ. . . կացէք. . . — գոչեց

Նկարիչը մի անսպասելի հրամալական եղանակով, որ շուարեցրեց նրա նեղիչներին:

Սրանք թոյլ տուին նրան ազատ շարժուել, կարծելով, թէ նա որոշել է մի գաղտնի բան լայտնել նրանց:

Անտառի եղջին, որ այժմ լուսաւորուած էր կայծակի կախարդական բոցերով, կանգնած էին երեսնի չափ խոժորադէմ, տարօրինակ շորեր հագած ու սպառազէն էակներ:

Նրանց կազմած կիսաշրջանի մէջ տեղուծ գտանւում էր նրանց պետը, նաև, որ փոքր ինչ առաջ հարձ ու փորձ էր արել ուղերին: Այս երիտասարդ, հպարտ, գոռող, մի ձեռը գոտուն դրած և երկայն վերարկուով փաթաթուած աւագակը գեղեցիկ էր իւր սառնութեամբ, իւր անողոքելի խստութեամբ: Նրա ուսին յենուած էր կիսով չափ ցինգանայի նման զգեստաւորուած մի վայելչակազմ և վերին աստիճանի սիրուն կին: Նա տկար էր թւում. . . Բայց և այնպէս նրա փոքրիկ ձեռը գիտէր դեկավարել պերճ հսկային, որ իւր կողմից սանձահարում էր իւր իշխանութեան տակ եղած արիւնարբու և ամեկի աւագակներին: :

Ուրեմն այդ նազելի կինը գտանւում էր այն տեղ մի թշուառ գերու գլխին հասած գատաստանի հէնց սկզբէց . . . Նա ներկայ էր այդ ողորմելու պատուհասին և կարեկցութեան ոչ մի նշան չէր ցոլացնում իւր հրապուրիչ կերպարանքը . . . Ադամորդումահը զբօսանք էր միայն նրա հաճուքին նույիրուած:

Նկարիչն արագ մօտեցաւ այդ լոիկ խըմբին և պշնած աչքով սկսաւ գիտել տարօրինակ կնոջն և նորա հսկայ ընկերին:

Վերջինս սպասում էր:

Տեսնելով որ երիտասարդը ոչ մի խօսք չէ ասում, այլ աւելի և տւելի խորասուզում է զննութեան մէջ, նա կըունկով գետնին խփեց անհամբեր.

— Դէ, ուրեմն . . . ինչ ունիս ասելու:

Արուեստագէտը յոգւոց հանեց, ասեաթէ լափշտակութիւնից սթափուելով, և անսաելի թափծութեամբ, ծանը կերպով մըրմընջեց.— Ափսոս, որ ասլրելու չեմ այսպիսի պատկեր նկարելու համար:

Սրիկաների հրամանատարը, մի վայրկեան այս պատասխանից շուարած, արհամարհու-

թեան նշան արաւ և հրամայեց, որ իւր ո-  
րոշումը կատարեն:

Սակայն մինչեւ այն ըստէն անզգալ թուող  
կինարմատի շրթունքի վրայ մի սնապարձուկ  
ժալիտ խաղաց:

— Սգալիտօ . . . ես կամենում եմ,  
որ ներես դրան, ասաց նա նուազութեամբ:

— Յնորում ես:

— Ոչ:

— Վշտակցութիւն. . . և քո՞ կողմից. . .

Վայրագ աւազակապեաի լաշաղկոտ յօն-  
քերի պոռտուփլը նշան էր, թէ կասկած է  
ընկել նրա սրտի մէջ:

— Սա մի յանկարձական բերմունք է. . .  
ես կամենում եմ:

— Բայց դա կը մատնէ մեզ. . .

— Միամիտ կաց: Եթէ ես թոյլ տամ  
դրան իւր ուզած պատկերը նկարելու. . . նա  
ինձ չի մատնիլ, ինձ:



Ետևեալ ձմբան Հոռվմը լիո-  
վին անձնատուր էր եղել  
բարեկենդանի գբօսանք-  
ներին:

Զանազան կատակներով  
ամբոխի սիրտը զուար-  
ճացնող երիտասարդների  
թուում կար մէկը, որ ամենից շատ էր  
աչքի ընկնում. նա, երեսին գիմակ  
դրած, վազգում էր փողոցներում, կանգ-  
նում էր անկիւններում և դէս ու դէն շուայ-  
լում իւր երգիծական ու սուր մտքի անսպա-  
ռելի արգասիքը:

Բոլոր քաղաքը ոտքի ելաւ իմանալու,  
թէ ով էր նա, և իմացաւ, թէ այն սրա-  
միտ կատակների հեղինակը մի անյալտ ա-  
րուեստագէտ է:


Այս գիպուածով նա անուն Հանեց:

Այնուհետեւ սկսան լաճախել նրա մօտ.  
գտան բազմաթիւ շնորհալի նախագծեր, և  
միայն մի նկար, որ լիովին աւարտած էր:  
Դա պատկերացնում էր վայրենի վեհութիւն  
կրող մի զառիվայր, կասկածելի ու սպառնա-  
կան դէմքով մարդիկ, մի նորատի և պայ-  
ծառ զորգ, և մի անձն, որ թիկունքը նա-  
յողների կողմը դարձրած, անձամբ նկարում  
էր այդ ամենը:

Հիացման ու լափշտակութեան աղաղակ  
էր, որ հնչեցրին արուեստասէր լաճախորդ-  
ները: Համեստ, անձանօթ մնացած, մինչև  
անդամ ամբոխի անտարբերութեամբ վշտա-  
ցած և իւր տրտում բնաւորութեամբ իւր  
երկիրն ու անունը թագուն պահող երիտա-  
սարդ նկարիչը, լանկարծ Հռովմայեցւոց կուռ-  
քը դարձաւ:

Այն ժամանակ նա արդար հպարտու-  
թեամբ ոգևորուած՝ վերցրեց վրձինն և գը-  
ծեց իւր երկի տակ, որ վերջապէս հռչակել  
էր նրա անձը, մի լաւերժ անմահ անուն, և  
այդ անունն էր Սալվատօր Ռօզա:





2399

2013

